ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 888

27 Հունիսի, 2001թ.

ՍԳԱԿԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Խոր ցավով տեղեկացանք մեր ժողովրդի արժանավոր զավակ, շնորհաշատ բանաստեղծ և գիտակ ու հմուտ բժիշկ Տիար Կարո Կարապետյանի անժամանակ մահվան մասին: Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Գերագույն Հոգևոր Խորհրդի Մեր անկեղծ ցավակցությունն ենք բերում Ձեզ և հանգուցյալի բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Մեր մասնավոր վշտակցությունն ենք հայտնում նաև Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանին, որի հոգևոր առաջնորդության ներքո հոգելույս Կարո Կարապետյանը իր կարելին էր ներդնում ի խնդիր Երուսաղեմի Հայոց Պատրիարքության շինության ու պայծառության:

Մեր հոգեբուխ աղոթքն է, որ Բազումողորմ Աստված երկնային երանավետ բարձունքներում խաղաղության մեջ ընդունի Իր ծառայի՝ Կարո Կարապետյանի լույս հոգին և Սուրբ Հոգու շնորհով Կարապետյան ընտանիքի սգակիր անդամներիդ պարգևի մխիթարություն ու սփոփանք և առաջնորդի արժանավոր գործերի:

Խունկ, մշտառաք աղոթք և օրհնություն ննջեցյալի անանց հիշատակին:

Վշտակից և աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ

Թիւ Անթիլիաս. 28 Յունիս. 2001

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արքեպիսկ. Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի
Երուսաղէմ.

Սիրեցեա՛լ եղբայր ի Քրիստոս,

Ժընեւի մէջ, ուր կը գտնուինք նախագահելու 1700-ամեակի նուիրուած «Հայ Եկեղեցւոյ Հոգեւոր Մշակոյթը» գիտաժողովին, Կաթողիկոսարանէն Մեզի փոխանցուած Ձեր 26 Յունիս, 2001 թուակիր նամակէն խոր ցաւով իմացանք մեր ժողովուրդի երախտարժան զաւակներէն, հմուտ սրտաբան եւ լայնամտաստակ մտաւորական Տէր. Կարօ Տ. Կարապետեանի մահը:

1998-ի Յունուարին Մենք *Կիլիկեան Ս. Մեսրոպ Մաշտոց Շէնշնորհ*ով պատուեցինք Տէր. Կարապետեանը, ի գնահատութիւն գիտութեան ու գրականութեան մարզերէն ներս իր բերած կարեւոր ներդրումներուն: Արդարեւ, գրականութեան "աւազան"ին մէջ ինքզինք ԱՆԵԼ անունով մկրտած Տէր. Կարօ Կարապետեան Աստուծոյ կողմէ իրեն շնորհուած կարողութիւնները գիտցաւ ներդաշնակել ու առատագոյն արդիւնաւորութեամբ բաշխել իր շրջապատին՝ հիւանդին թէ առողջին, Երուսաղէմէն մինչեւ Լիբանան եւ Ֆրանսայէն մինչեւ Ամերիկա: Իր գիտական մասնագիտութեամբ Տէր. Կարապետեան դարմանեց մարդոց ֆիզիքական ցաւերը, իսկ իր գրչէն թուղթին յանձնած արուեստի տողերով, ինչ ալ կոչուի անոնց գումարը՝ յօդուած թէ պատմուածք, վէպ թէ բանաստեղծութիւն, ան ներթափանցեց ընթերցողի մտքին ու հոգիին եւ արուեստի կախարդական վայելքին հրճուանքը տուաւ անոր:

Կորուստ մըն է մահը Տէր. Կարօ Կարապետեանին, որուն կեանքը եղաւ օրհնուած Աստուծոյ կողմէ, զինք հասցնելով խոր ծերութեան:

Կ'աղօթենք, որ Ամենաբարին Աստուած երկնային երանական խաղաղութեան արժանացնէ Տէր. Կարօ Կարապետեանի ազնիւ հոգին, եւ իր սիրելի զաւկին՝ Տէր. Վիգէն Կարապետեանին ու բոլոր հարազատներուն շնորհէ Սուրբ Հոգւոյն մխիթարութիւնը:

Մեր սրտագգած ցաւակցութիւնները կը յայտնենք Ձեզի եւ Ձեր ճամբով Տէր. Վիգէնին ու ընտանիքի անդամներուն: Թող հանգուցեալ Տէր. Կարօ Կարապետեանի յիշատակը միշտ պայծառ մնայ իր հարազատներու հոգիներուն մէջ, եւ ԱՆԵԼ-ը յաւերժանայ իր գրական ժառանգութեան ընդմէջէն:

Եղբայրական սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթակից՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

digitised by A.R.A.R.@

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

29 Յունիս 2001

Ազնիւ
Տքթ. Վիզէն Կարապետեան
Փարիզ

Սրտի խոր ցաւով տեղեկացանք Ձեր հօր՝ սրտաբաց բժիշկ եւ գրագէտ Տքթ. Կարօ Կարապետեանի մահուան լուրին:

Ձեր բարեյիշատակ հայրը, Անել, պատկանած է այն գրագէտներու փաղանգին, որոնք իրենց բուն ասպարէզին ատրճանակ կրցած են արժեւորել նոյնպէս իրենց գրական տաղանդը, հաւատարիմ սպասարկուները դառնալով Մեսրոպեան գիրին:

Իր մահով Հայ մատենագրականութիւնը ընդհանրապէս, իսկ Երուսաղէմի Հայ հասարակութիւնը յատկապէս կը կորսնցնէ արժէքաւոր անձ մը, որ գիտցած է միախառնուիլ իր ժողովուրդին հոգեւոր եւ բարոյական գանձերուն հետ:

Կ'աղօթենք, որ Ամենաբարին Աստուած ընդունի իր հոգին երկնային երանաւէտ խաղաղութեան մէջ:

Կ'աղօթենք, որ Բարձրեալն Աստուած Ձեր բարեյիշատակ հօր օրինակով նոր ոյժեր պարգեւէ մեր գրական սնդուկին:

Այս առթիւ կը յայտնենք Մեր ցաւակցութիւնները Ձեզի եւ ձեր ընտանեկան պարագաներուն, հայցելով Ս. Հոգւոյ մխիթարութիւն:

Մնամք ողջունիւ սիրոյ եւ վշտակցութեամբ,

Աղօթարար,

ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔ

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՓՈԽՊՐԵՍԻԴԵՆՏ-ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ
НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ВИЦЕ-ПРЕЗИДЕНТ-АКАДЕМИК-
СЕКРЕТАРЬ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA VICE-PRESIDENT-
ACADEMICIAN-SECRETARY

375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24
Հեռ. (3741) 521-362
E-mail: barkh@sci.am

24, Marshal Baghramyan ave., Yerevan
375019,
Tel. (3741) 521-362
E-mail: barkh@sci.am

«28» հուլիսի 2000թ.

Երուսաղեմի հայոց պատրիարք
Գերաշնորհ տեր Թորգոմ Սանուկյանին

Գերաշնորհ պատրիարք-սրբազան,
սիրելի Վիգեն Կարապետյան, և Գարեգին Բ
մեծահարգ հոգևոր հայրեր

Խորապես ցավակցում ենք անվանի գրող, սփյուռքահայ նշանավոր հասարակական գործիչ, Հայաստանի գրողների միության անդամ Կարո Կարապետյանի՝ Անելի մահվան կապակցությամբ: Նրան Սփյուռքում և հայրենիքում ճանաչում էին որպես հրաշալի բժիշկ, ինքնատիպ բանաստեղծ ու գրականագետ, բազմաթիվ գրքերի հեղինակ, ակտիվ հասարակական գործիչ, մեծ հայրենասեր, իսկական հայ ընտանիքի հայր: Մեր ժողովրդի հասարակական ու մշակութային կյանքի զարգացման գործում կատարած խոշոր ծառայությունների, ազգային անմնացորդ նվիրումի համար Անելն արժանացել է բազմաթիվ պարգևների, այդ թվում՝ «Սեսրոպ Մաշտոց» շքանշանի: Նա կարևոր մասնակցություն է բերել սփյուռքի գաղթօջախների գոյատևման, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման, սփյուռքահայ գրականության զարգացման գործին: Իր ծանրակշիռ վաստակի համար Կարո Կարապետյանի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում, նրա անունն ընդմիշտ կհիշվի հայ անվանի գործիչների շարքում:

Կրկին ընդունեք բազմաթիվ հայրենաբնակ, գիտնականների, գրողների ու մշակույթի գործիչների խորագույն ցավակցությունները ու կարեկցանքը:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտնականների անունից՝

ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն Աշոտ Սելքոնյան

digitised by A.R.A.R.@